ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«8» սեպտեմբերի 2026 թվականի N:116-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 236-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-3 կետերի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2026 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կառավարմանը վերապահված պետական բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2025 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե վճարվող շահութաբաժինների չափերի հաստատման մասին» N 236-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման հավելվածի 5-րդ կետում «27,700.00» և «13,850.00» թվերը համապատասխանաբար փոխարինել «314,700.00» և «157,350.00» թվերով:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է